Երկրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1177-21.05.2011-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ *հոդվածի*՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար երեխայի ծնողներից մեկը կամ երեխայի որդեգրողը կամ երեխայի խնամակալը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին և ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում, որում դիմողը լրացնում է իր ընտանիքի *բնակության վայրը, կացարանը, իր և երեխայի անձը հաստատող փաստաթղթերի տվյալները, իր և երեխայի, բացառությամբ* մինչև 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի, սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, ինչպես նաև նպաստի վճարման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ).

2) երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը, իսկ 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի համար՝ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի տված ծննդի պետական գրանցման փաստը հաստատելու մասին փաստաթղթի պատճենը.

3) անհրաժեշտության դեպքում դիմողը ներկայացնում է նաև.

ա. սույն հոդվածի 3.2-րդ մասով սահմանված ընտանիքում ծնված երեխայի թիվը որոշելու նպատակով՝ իր խնամքի տակ գտնվող (միևնույն բնակության վայրում բնակվող) չամուսնացած չափահաս զավակների, ինչպես նաև երեխաների, այդ թվում՝ որդեգրած և (կամ) խորթ, ծննդյան վկայականները և դրա պատճենները.

բ. խնամակալության կամ որդեգրման մասին փաստաթղթի պատճենը.

գ. ռազմաուսումնական հաստատություններում սովորելու մասին տեղեկանքը.

4) երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար սույն հոդվածի 1), 2) և 3) կետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանք ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:»:

2. 1-ին մասից հետո լրացնել 1.1 *մասով* հետևյալ բովանդակությամբ.

«1.1 Սույն հոդվածի 1-ին մասի 1)-ին *կետով* նախատեսված դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրերի ընթացքում, տարածքային մարմինը դիմումում հայտարարագրված բնակության վայրի և այնտեղ բնակվող անձանց մասին տվյալների հավաստիությունը ճշտում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների միջոցով:»:

3. 4-րդ մասը «ժամկետները,» բառից հետո լրացնել «, ինչպես նաև նշանակման և վճարման կարգը,» բառերով:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 24-րդ *հոդվածի*՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Երեխայի խնամքի նպաստի համար ծնողը դիմում է իր փաստացի բնակության վայրի տարածքային մարմին և ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1) դիմում, որում դիմողը լրացնում է իր ընտանիքի *բնակության* վայրը (հասցեն, կացարանը), իր անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իր և երեխայի սոցիալական ապահովության քարտի կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու մասին տեղեկանքի համարը, ինչպես նաև նպաստի վճարման եղանակը (կանխիկ կամ անկանխիկ).

2) երեխայի ծննդյան վկայականի պատճենը.

3) տեղեկանք գործատուից իր՝ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու մասին.

4) երեխայի խնամքի նպաստ ստացող ծնողին՝ իր կրտսեր հաջորդ (այսուհետ՝ կրտսեր) երեխայի համար երեխայի խնամքի նպաստ նշանակվելու դեպքում՝ տեղեկանք գործատուից՝ կրտսեր երեխայի ծննդյան կապակցությամբ ծնողին տրված, ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված, ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի մասին.

5) երեխայի խնամքի նպաստի համար սույն հոդվածի 1), 2), 3) և 4) կետերում նշված փաստաթղթերը չեն պահանջվում, եթե դրանք ներառված են համապատասխան մարմինների էլեկտրոնային տեղեկատվական բազաներում:»:

2. լրացնել 1.1 *մասով* հետևյալ բովանդակությամբ.

«1.1 սույն հոդվածի 1-ին մասի 1)-ին *կետով* նախատեսված դիմումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրերի ընթացքում, տարածքային մարմինը դիմումում հայտարարագրված բնակության վայրի հասցեի և այնտեղ բնակվող անձանց մասին տվյալների հավաստիությունը ճշտում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների միջոցով:»:

3. հոդվածի 10-րդ մասի «ե)» կետում «երեխայի» բառից հետո լրացնել «և (կամ) ծնողի» բառերը:

4. 11-րդ մասը «չափը,» բառից հետո լրացնել «նշանակման և վճարման կարգը» բառերը:»:

ՀՈԴՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Ամփոփաթերթիկ
ՀՀ Ազգային ժողովի կողմից առաջին ընթերցմամբ ընդունված
««Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ առաջարկությունների

առաջարկության հեղինակ	**հոդված**	**բովանդակություն**	**եզրակացություն**
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 1, Օրենքի 22-րդ հոդված	Նախագծի 1-ին հոդվածում նշված «22-րդ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «հոդվածի՝» բառը	ներառված է, խմբագրական բնույթի փոփոխություն է
ՀՀ կառավարություն	նախագծի հոդվածներ 1 և 2, Օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների 1-ին մասերում «հոդվածի» և «նոր» բառերն անհրաժեշտ է հանել:	ներառված է, խմբագրական բնույթի փոփոխություն է
ՀՀ կառավարություն	նախագծի հոդվածներ 1 և 2, Օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածներ	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների 1-ին մասերի 1-ին կետերի և նույն հոդվածների 2-րդ մասերով կատարվող լրացումների միջև առկա են ներքին հակասություններ, մասնավորապես, վերոհիշյալ հոդվածների նշված կետերում նախատեսվում է, որ երեխայի ծննդյան միանվագ նպաստի համար ներկայացվող դիմումում պետք է լրացվեն դիմողի ընտանիքի գտնվելու վայրի (հասցեի, կացարանի) վերաբերյալ տեղեկություններ, մինչդեռ նույն հոդվածների 2-րդ մասերում նախատեսվում է, որ տարածքային մարմինը բնակչության պետական ռեգիստրից ճշտում է դիմումում հայտարարագրված բնակության վայրի հասցեի հավաստիությունը: Հետևաբար, վերոհիշյալ հոդվածների 1-ին մասերի 1-ին կետերում նշված «գտնվելու վայրը (հասցեն,կացարանը), իր անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իր և երեխայի, բացառությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բնակության վայրը, կացարանը, իր և երեխայի անձը հաստատող փաստաթղթի տվյալները,	ներառված է, խմբագրական բնույթի փոփոխություն է

		բացառությամբ» բառերով: Միաժամանակ, 1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետում «1) դիմում,» բառերից առաջ նշված չակերտն անհրաժեշտ է հանել:	
ՀՀ կառավարություն	նախագծի հոդվածներ 1 և 2 Օրենքի 22-րդ և 24-րդ հոդվածներ	նախագծի 1-ին և 2-րդ հոդվածների 2-րդ մասերում նշված «1.1 կետով» բառերն անհրաժեշտ է փոխարինել «1.1 մասով» բառերով, իսկ «1)-ին ենթակետով» բառերը՝ «1-ին կետով» բառերով: Նույն մասերում նշված «բնակության վայրի հասցեի» բառերն անհրաժեշտ է փոխարինել «բնակության վայրի» բառերով:	ներառված է, խմբագրական բնույթի փոփոխություն է
ՀՀ կառավարություն	նախագծի հոդված 2 Օրենքի 24-րդ հոդվածը	Նախագծի 2-րդ հոդվածում նշված «Օրենքի 24-րդ» բառերից հետո անհրաժեշտ է լրացնել «հոդվածի» բառը:	ներառված է, խմբագրական բնույթի փոփոխություն է